Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 253 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Էջմիածնի քաղաքապետարանի մանկապարտեզի վերանորոգում»

1.	Ծրագրի նպատակը	Վերանորոգել «Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ–ի երկու մասնաշենքերը, ինչի արդյունքում էապես կբարելավվեն նախադպրոցական ուսումնական հաստատության պայմանները: Ավելի քան 120 փոքրիկ հնարավորություն կունենա հաճախել և կրթություն ստանալու առավել բարեկարգ, լուսավոր և անվտանգ միջավայրում, որտեղ ապահովված են սանիտարահիգիենիկ բոլոր պայմաններն ու չափորոշիչները: Բացի այդ ծրագիրը հնարավորություն կտա բացելու ևս մեկ նոր խումբ և մանկապարտեզ ընդունելու իրենց հերթին սպասող ևս 30 փոքրիկի:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն (ՀՀ, 0037, քաղ. Երևան, Բաբայան 23/4)
4.	Ծրագիրը կատարողը	«Էջմիածնի քաղաքապետարանի թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզ» ՀՈԱԿ (ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, քաղ. Էջմիածին, Բաղրամյան փող. 0, ՀՎՀՀ՝ 04723801)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, քաղ. Էջմիածին, Բաղրամյան փող. 0, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	45,445, 540 դրամ (առանց ԱԱՀ), որից՝

		- Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն – 44,549, 414 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի, Վաղարշապատ համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի ապրիլի 8-ից մինչև 2022 թվականի հունիսի 13-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մանկապարտեզի երկու մասնաշենքերի վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում – 45,445,540 դրամ, որից Հայաստանի Հանրապետությունում Ճապոնիայի դեսպանատուն՝ 44,549, 414 դրամ Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ապրիլի 8-ից մինչև հունիսի 13-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Վերանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 45,445,540 դրամ, որից 44,549, 414 դրամ (առանց ԱԱՀ-ի) վճարվելու է Ճապոնիայի դեսպանատան դրամաշնորհային միջոցներով, իսկ 1, 075,351 դրամը (ներառյալ ԱԱՀ-ն) վճարվելու է Վաղարշապատի համայնքապետարանի միջոցներով: Վերջինիս համար համայնքապետարանը չի ակնկալում Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնության տրամադրում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվելու է Վաղարշապատի համայնքապետարանի հետ համագործակցությամբ: Վաղարշապատի համայնքապետարանն իր բյուջեի միջոցներից է վճարելու ծրագրի ընթացքում դրամաշնորհային հաստատված միջոցներից ավելի պահանջվող գումարը:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Իրականացնելու է՝ - ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատունը՝ հաշվետվությունների, ֆինանսական աուդիտի, ինչպես նաև մոնիթորինգային այցերի միջոցով: - ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-ն որոշ-մամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: - Վաղարշապատի համայնքապետարանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

07.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ